




ՀՀ քաղաքաշինության նախարարություն

Empowered lives.
Resilient nations.

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների



ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների

ԵՐԵՎԱՆ
ՄԱԶԾ
2013

ՀՏԴ 699.86 (07)
ԳՄԴ 38.3g7
Շ 470

Շ 470 «Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների խորհրդատվական ձեռնարկ».- Եր.: ՄԱԶԾ, 2013, 130 էջ:

«Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումների խորհրդատվական ձեռնարկը» հավանության է արժանացել ՀՀ քաղաքաշինության նախարարի 2013թ. նոյեմբերի 6-ի թիվ 343 հրամանով և առաջարկվել է կիրառության նախագծային և շինարարական աշխատանքներում:

Ձեռնարկը մշակվել է «Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագրի շրջանակներում «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» ՊՈԱԿ և «Էյ Ի Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից, Ծրագրի փորձագետների մասնակցությամբ:

Ձեռնարկը ներառում է Հայաստանի Հանրապետությունում նոր կառուցվող և վերակառուցվող բնակելի, հասարակական և արտադրական շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման տեխնիկական լուծումներ և ունի խորհրդատվական բնույթ:

This “Advisory handbook on technical solutions for thermal insulation of envelopes of residential, public and industrial buildings in construction and reconstruction in the Republic of Armenia” was developed and published in the frames of the “Improving Energy Efficiency in Buildings” UNDP-GEF/00059937 Project. The Handbook was endorsed by the Minister of Urban Development of the Republic of Armenia (order N343 of November 6, 2013).

The Handbook contains general schematic solutions for thermal insulation joints of building envelopes, minimal required thicknesses of thermal insulation layers of building envelopes, maps of Armenia’s climatic parameters and seismic maps, and other auxiliary informational materials. Estimations are performed for one- and multi-storey buildings suited for construction in all climatic zones of Armenia (fire resistance degrees: I to IV, temperature and humidity regimes: dry, normal, humid). The Handbook intends to benefit developers, students, academia and other relevant actors.

ՀՏԴ 699.86 (07)
ԳՄԴ 38.3g7

ISBN 978-99941-2-934-8

© ՄԱԶԾ Հայաստան, 2013թ.
© UNDP Armenia, 2013

Աշխատանքային խումբը



«Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» ՊՈԱԿ

Կարեն Ռաշիդյանց
Արա Զաքարյան

ճարտարապետ-խորհրդատու
ճարտարագետ, էներգետիկ մենեջեր



«Էյ Ի Քոնսալթինգ» ՍՊԸ ընկերություն

Ռուբեն Համբարձումյան
Աննա Ակտարյան
Լևոն Վարդանյան
Աննա Վարդանյան

ճարտարագետ-ջերմատեխնիկ
ճարտարապետ
ճարտարագետ-կոնստրուկտոր
ՍՊԸ տնօրեն, խմբի ղեկավար



«Շենքերի էներգետիկ արդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ-ԳԷՖ/00059937 ծրագիր

Ապրես Նազարյան
Արթուր Ծուղունյան
Արսեն Կարապետյան
Վահրամ Զալալյան

Ծրագրի փորձագետ
Ծրագրի փորձագետ
Ծրագրի փորձագետ
Ծրագրի առաջադրանքի ղեկավար

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տերմիններ, հապավումներ, չափման միավորներ.....	2
Ներածություն	3
1. Ընդհանուր ելակետային դրույթներ	3
2. Դիտարկված ջերմամեկուսիչ նյութերի և շինվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները.....	6
3. Ջերմային պաշտպանության նորմերն ու կոնստրուկցիայի ջերմամեկուսիչ շերտի հաստության հաշվարկման հիմնական սկզբունքները.....	7
4. Արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը.....	9
4.1. Առանց օդային միջնաշերտի արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը	9
4.2. Օդային միջնաշերտով արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը	14
4.3. Նկուղի արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը	16
5. Ծածկերի ջերմային պաշտպանությունը	18
5.1. Նկուղի ծածկի ջերմային պաշտպանությունը.....	18
5.2. Ձեղնահարկով շենքերի վերջին հարկի ծածկ (վերնածածկ)	19
5.3. Պատշգամբներ և բարձակային ելուստներ.....	21
6. Տանիքների ջերմային պաշտպանությունը.....	22
6.1. Հարթ տանիքների ջերմային պաշտպանությունը	22
6.2. Լանջավոր տանիքները և մանսարդները	24
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	
Հավելված 1. Ապակեցանցի բնութագրերը.....	26
Հավելված 2. Հանքային բամբակից ներքնակներին և փրփրապոլիստիրոլից սալերի ամրացման սոսինձներ	27
Հավելված 3. Դիտարկված խցաբութակների տեսակները	28
Հավելված 4. Դիտարկված ջերմամեկուսիչ նյութերի շահագործման ժամկետները և էկոլոգիական պիտանելիությունը.....	29
Հավելված 5. Գոլորշամեկուսիչ և ջրամեկուսիչ թաղանթների բնութագրերը.....	30
Հավելված 6. ՀՀ բնակավայրերի համար պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսիչ շերտի նվազագույն հաստությունները.....	31
Հավելված 7. ՀՀ կլիմայական հարաչափերի և սեյսմիկ քարտեզները.....	97
Հավելված 8. Շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման իրականացման հանգույցների սկզբունքային սխեմատիկ լուծումներ.....	107



ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ափսեանման խցաբութակ	Тарельчатый дюбель	Կցվանք	Стык
Գետնախարիսխ	Цоколь	Կցակ	Кляммер
Գրադիենտ	Градиент	Հարթաշերտ	Стяжка
Պիպ	Конек	Նախաշերտ	Грунтовка
Ինքնակտրող պտուտակ	Шуруп-саморез	ՊՎՔ	ПВХ, поливинилхлорид
Պահունակ	Кронштейн	Սայդինգ	Сайдинг
Խցաբութակ	Дюбель		

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԳԷՖ	Գլոբալ էկոլոգիական ֆոնդ
Ե/բ	Երկաթբետոն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀՇՆ	Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր
ՀՍՍ	Հայաստանի ազգային ստանդարտ
ՄԱԶԾ	Միավորված Ազգերի Կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված Ազգերի Կազմակերպություն
ՄՍՆ (MCH)	ԱՊՀ միջպետական շինարարական նորմեր
ՇՆՁ	շինարարական նորմերի ձեռնարկ
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՋՇԱՕ	ջեռուցման շրջանի աստիճան-օրեր
ՍՆԻՊ (СНИП)	շինարարական նորմեր ու կանոններ
ՍՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏՊ	տեխնիկական պայմաններ
g/w	ցեմենտավազ
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն

ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ

ժ	ժամ	մմ	միլիմետր
կՎտ	կիլովատտ	Պա	Պասկալ
մ	մետր	Վտ	Վատտ
մ²	քառակուսի մետր	տ	տոննա
մ³	խորանարդ մետր	°C	աստիճան Ցելսիուս
մգ	միլիգրամ		

Ներածություն

Ձեռնարկը կրում է խորհրդատվական բնույթ և նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում էներգաարդյունավետ շենքեր և շինություններ նախագծելու համար, օգտակար կլինի նաև կառուցապատողների, ուսանողների, գիտաշխատողների և այլ մասնագետների համար:

Ձեռնարկը պարունակում է շենքերի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման իրականացման հանգույցների սկզբունքային սխեմատիկ լուծումներ, ՀՀ բնակավայրերի համար պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսիչ շերտի նվազագույն հաստություններ, ՀՀ կլիմայական հարաչափերի և սեյսմիկ քարտեզներ, ինչպես նաև օժանդակ այլ տեղեկատվական նյութեր: Հաշվարկները կատարված են I-IV հրակայունության աստիճանով, չոր, նորմալ, թաց ջերմաստիճանախոնավային ռեժիմով միահարկ և բազմահարկ շենքերի համար, որոնք կարելի է կառուցել ՀՀ ամբողջ տարածքում:

Առանձին օբյեկտների նախագծումն անհրաժեշտ է իրականացնել, հաշվի առնելով.

ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների. նախագծման նորմեր»,

ՇՆՁ II-7.102-98 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների»,

ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն»,

ՇՆՁ II-7.101-98 «ՀՀ կլիմայական պայմաններում բնակավայրերի, շենքերի և կառուցվածքների կառուցում»,

ՀՀՇՆ II-8.03-96 (MCH 2.04-05-95) «Արհեստական և բնական լուսավորում»,

ՀՀՇՆ IV-12.02.01-04 «Ձեռուցում, օդափոխում և օդի լավորակում»,

ՄՆԻՊ 2.03.13-88 «Հատակներ»,

ՄՆԻՊ 2.08.01-89 «Բնակելի շենքեր»,

ՄՆԻՊ 2.08.02-89 «Հասարակական շենքեր և կառուցվածքներ»,

ՄՆԻՊ 2.09.04-87 «Աղմինիստրատիվ և կենցաղային շենքեր»,

ՄՆԻՊ 3.04.01-87 «Մեկուսիչ և հարդարող պատվածքներ»,

ՀՀՇՆ II-8.04.01-97 «Շենքերի և կառուցվածքների հրդեհային անվտանգություն» և այլ նորմատիվային փաստաթղթերը:

1. Ընդհանուր ելակետային դրույթներ

1.1. Ձեռնարկում դիտարկված արտաքին պատող կոնստրուկցիաների տեսակները ներկայացված են 1-ին աղյուսակում:

1.2. Ձեռնարկում դիտարկված ջերմամեկուսիչ նյութերը ներկայացված են 2-րդ աղյուսակում:

1.3. Ձեռնարկում դիտարկված են արտաքին երեսպատման շերտ ունեցող հետևյալ պատի կոնստրուկցիաները՝

- 20-30 մմ հաստությամբ քարանյութ (տուֆ, բազալտ, ֆելզիտ, տրավերտին),
- ց/ա շաղախ կամ դեկորատիվ սվաղ,
- թերթավոր մետաղական պրոֆիլներ (ալիկաբոնդ),
- պլաստմասե կամ փայտե սայդինգ:



Աղյուսակ 1. Ձեռնարկում պատող կոնստրուկցիաների ընդունված տիպերը			
N, h/h	Կոնստրուկցիայի տեսակը	Խտությունը, կգ/մ ³	Հաստությունը, մ
Արտաքին պատերը (օդափոխվող օդային միջնաշերտով և առանց միջնաշերտի)			
1	Կանոնավոր ձևի բնական քարերով և g/w շաղախով	1500 և 1700	0,2 0,4
2	«Միդիս» շարվածքով	1500 և 1700	0,5
3	Միաձուլացված բլոկներով և g/w շաղախով	1600 և 1800	0,2 0,3 0,4
4	Բետոնե մանրաձակոտկեն բլոկներով և g/w շաղախով	1000 և 1200	0,2 0,3 0,4
5	Պեոլիտաբետոնե բլոկներով	600 800 1000 1200	0,2 0,3 0,4
6	Երկաթբետոնե	2500	0,15 0,2 0,3 0,4
Նկուղի պատերը			
7	Բուտաբետոնե	2400	0,4 0,5
8	Միաձույլ երկաթբետոնե	2500	0,4 0,5
Ծածկերը			
9	Երկաթբետոնե (միաձույլ կամ հավաքովի կոնստրուկցիաներ)	1800 և 2500	0,10 0,15 0,20 0,22



Աղյուսակ 2. Ձեռնարկում ներառված ջերմամեկուսիչ նյութերը և դրանց ֆիզիկամեխանիկական բնութագրերը														
Ջերմամեկուսիչ նյութի տեսակը														
N, հ/հ	Ցուցանիշի անվանումը, չափման միավորը	Թեթև, կիսակշռ և կշռտ ներքնակներ հանքային բամբակից				Էքստրուդացված փրփրապոլիստիրոլ			Փրփրապոլիուրեթան			Բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեղիտից արտադրատեսակներ		
		I	II	III	IV	I	II	III	I	II	III	I	II	
1	խտությունը, կգ/մ ³	40-60	80-125	140-175	180	35	45	80	200	225	200	225	200	225
2	Տեսակարար ջերմունակությունը C ₀ , կՋ/(կգ·°C), ոչ պակաս, քան	0,84				1,34			1,47			1,68		
3	Հաշվարկային ջերմա-հարողականությունը ըստ շահագործման պայմանների, λ, Վտ/(մ·°C), ոչ ավելի	U	0,041	0,042	0,043	0,045	0,031	0,031	0,031	0,04	0,041	0,05	0,078	0,082
		F	0,044	0,045	0,046	0,048	0,031	0,032	0,032	0,04	0,041	0,05	0,09	0,094
4	Հաշվարկային ջերմայրացման գործակիցն ըստ շահագործման պայմանների, s, Վտ/(մ ² ·°C) ոչ ավելի, քան	U	0,37	0,53	0,68	0,74	0,34	0,4	0,4	0,4	0,53	0,67	1,23	1,39
		F	0,41	0,59	0,75	0,81	0,37	0,42	0,42	0,42	0,55	0,7	1,32	1,47
5	Գոլորշաթափանցելիություն, μ, կգ/(մ·ժ·Պա), ոչ պակաս	U	0,35	0,32	0,31	0,3	0,005	0,015	0,005	0,05	0,05	0,05	0,04	0,04
		F	2	5	2	5	2	10	2	5	2	5	1	2
6	Հաշվարկային հարաբերական խտնակությունն ըստ շահագործման պայմանների, w, %	U	2	5	2	5	2	10	2	5	2	5	1	2
		F	2	5	2	5	2	10	2	5	2	5	1	2
7	Այրելիության խումբը	ՉԱ				Ա1-Ա3	Ա3,Ա4	Ա3,Ա4	ՉԱ	ՉԱ	ՉԱ	ՉԱ	ՉԱ	ՉԱ
		ԳՕՍՍ 30244-94				ԳՕՍՍ 30244-94			ԳՕՍՍ 30244-94			ԳՕՍՍ 30244-94		

Ծանոթություն՝

Կոնկրետ կազմակերպության արտադրանքի ֆիզիկամեխանիկական հատկությունները, ինչպես նաև արտադրանքի չափերն անհրաժեշտ է ճշտել արտադրողից/ներկրողից:

Աղյուսակ 2-ի 1-6 տողերի ֆիզիկամեխանիկական բնութագրերը վերցված են միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում:

2. Դիտարկված ջերմամեկուսիչ նյութերի և շինվածքների ֆիզիկամեխանիկական հատկությունները

- 2.1. Որպես ջերմամեկուսիչ նյութեր և շինվածքներ, դիտարկվել են Հայաստանի շուկայում առկա տեղական արտադրության և ներկրվող նյութերը, որոնց ֆիզիկամեխանիկական հատկությունները ներկայացված են 1-ին աղյուսակում (ջերմամեկուսիչ նյութերի մասին ավելի մանրամասն տեղեկատվություն կարելի է ստանալ ՄԱԶԾ-ԳԷՖ ծրագրի շրջանակներում մշակված տվյալների բազայից):
- 2.2. Ջերմամեկուսիչ նյութերի այրելիությունը դասակարգվում է ըստ ԳՕՍՏ 30244-94 ստանդարտի: Ըստ ՀՀՇՆ II-8.04.01-97 շինարարական նորմերի, շինարարական նյութերը ստորաբաժանվում են չայրելիների (ՉԱ) և այրելիների, որոնք, իրենց հերթին, ստորաբաժանվում են Ա1 (թույլ այրելի), Ա2 (չափավոր այրելի), Ա3 (նորմալ այրելի) և Ա4 (ուժեղ այրելի) դասերի:
- 2.3. Ըստ ՀՀՇՆ II-8.04.01-97 շինարարական նորմերի՝ պաշտպանիչ-դեկորատիվ սվաղի շերտով քարե կամ թեթև լցանյութերով բետոններից պատրաստված բլոկներից շարվածքով պատերը, ինչպես նաև ե/բ սալերի 50 մմ-ից ոչ պակաս հաստությամբ ծածկերը կարող են կիրառվել I-IV հրակայունության աստիճանով շենքերում:

Հիմնական սահմանումները

- 2.4. Նյութի ջերմահաղորդականության թվային բնութագիրը միավոր ջերմաստիճանային գրադիենտի դեպքում հավասար է միավոր ժամանակի ընթացքում 1 մ² մակերեսով նյութի միջով անցնող ջերմության քանակին: Ջերմահաղորդականության գործակիցը (λ) չափվում է Վտ/մ·°C:
- 2.5. Ջերմատեխնիկական հաշվարկների ժամանակ պատող կոնստրուկցիայի շահագործման Ա կամ Բ պայմանի (ՀՀՇՆ II-7.02-95, 3-րդ հավելված) համար որպես նյութի ջերմահաղորդականության գործակից պետք է ընդունել հաշվարկային ջերմահաղորդականության գործակիցը:
- 2.6. Ջերմատեխնիկական հաշվարկների ժամանակ նյութի հաշվարկային հարաբերական խոնավությունը (w , %) հարկավոր է ընդունել համաձայն պատող կոնստրուկցիաների շահագործման Ա կամ Բ պայմանի:
- 2.7. Ջերմաստիճանի 1°C տարբերության դեպքում միավոր ժամանակահատվածում նյութի ջերմայուրացման գործակիցը (s , Վտ/մ²·°C) միավոր մակերեսի վրա ծախսված էներգիան է: Ջերմատեխնիկական հաշվարկների ժամանակ նյութի ջերմայուրացման գործակիցը հարկավոր է ընդունել ըստ պատող կոնստրուկցիաների շահագործման Ա կամ Բ պայմանի:
- 2.8. Նյութի երկու մակերևույթների վրա հավասար մթնոլորտային ճնշման դեպքում ջրային գոլորշիների պարցիալ ճնշման տարբերության արդյունքում գոլորշաթափանցելիությունը ջրային գոլորշիներ թողնելու կամ պահելու ունակությունն է, որը բնութագրվում է գոլորշաթափանցելիության գործակցով (μ , մգ/(մ·ժ·Պա)):

3. Ջերմային պաշտպանության նորմերն ու կոնստրուկցիայի ջերմամեկուսիչ շերտի հաստության հաշվարկման հիմնական սկզբունքները

- 3.1. Տարբեր նշանակության և կլիմայական պայմաններում շահագործվող շենքերի պատերի և ծածկերի ջերմափոխանցման դիմադրությունների պահանջվող նվազագույն արժեքները սահմանված են ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների. նախագծման նորմեր» շինարարական նորմերով: Նկուղի հատակի մակարդակից բարձր գտնվող պատերի ջերմափոխանցման դիմադրությունն ընդունվում է, հաշվի առնելով արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանը, որը հավասար է արտաքին պատերի հաշվարկային ջերմաստիճանին: Հասարակական ու արտադրական նշանակության շենքերի և շինությունների հատակների ջերմայուրացման գործակիցը չպետք է գերազանցի ՀՀՇՆ II-7.02-95-ում նշված արժեքները, հակառակ դեպքում անհրաժեշտ կլինի նախատեսել լրացուցիչ ջերմամեկուսիչ շերտ:
- 3.2. Օդափոխվող օդային միջնաշերտով պատերի կոնստրուկցիաներում ջերմամեկուսացման պահանջվող նվազագույն հաստությունը որոշվում է օդային միջնաշերտի ջերմատեխնիկական և աերոդինամիկական հաշվարկներով:
- 3.3. Նկուղի հատակի ջերմամեկուսացումը հաշվարկվում է միայն տաք նկուղների համար:
- 3.4. Նկուղի հատակի մակարդակից բարձր գտնվող պատերի ջերմափոխանցման պահանջվող դիմադրությունը պետք է ընդունել շենքի արտաքին պատերի պահանջվող ջերմափոխանցման դիմադրությանը հավասար, որը նորմավորված է ըստ ՀՀՇՆ II-7.02-95 և հաշվարկվում է, ելնելով տվյալ տարածքի ջեռուցման ժամանակաշրջանի աստիճան-օր ցուցանիշից:
- 3.5. Արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմատեխնիկական հաշվարկներն իրականացվում են ըստ ՀՀՇՆ II-7.02-95 «Շինարարական ջերմաֆիզիկա շենքերի պատող կոնստրուկցիաների. նախագծման նորմեր» շինարարական նորմերի:
- 3.6. Ջեռուցման ժամանակաշրջանի աստիճան-օրեր ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$D_c = (t_u - t_{2.2}) \times Z_{2.2}, \quad (1)$$

որտեղ՝ t_u շենքի ներսի օդի միջին հաշվարկային ջերմաստիճանն է, °C
 $t_{2.2}$ արտաքին օդի միջին ջերմաստիճանն է ջեռուցման ժամանակաշրջանում, °C
 $Z_{2.2}$ ջեռուցման ժամանակաշրջանի օրերի թիվը:

Այս արժեքները բուժկանխարգելիչ, մանկական հիմնարկներ, ծերերի ու հաշմանդամների գիշերօթիկ տներ նախագծելիս ընդունվում են արտաքին օդի 10°C-ից ոչ բարձր միջին օրական ջերմաստիճան ունեցող ժամանակաշրջանի համար, մնացած շենքերի համար՝ 8°C-ից ոչ բարձր, ըստ ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի 2.1 աղյուսակի:

Հաջորդաբար շարված միասեռ շերտերով պատող կոնստրուկցիայի ջերմափոխանցման դիմադրությունը՝ R_{Σ} , մ²·°C/Վտ, անհրաժեշտ է որոշել որպես առանձին շերտերի ջերմափոխանցման դիմադրությունների գումար.



$$R_{li} = R_1 + R_2 + \dots + R_n, \quad (2)$$

որտեղ R_1, R_2, \dots, R_n -ը պատող կոնստրուկցիաների առանձին շերտերի ջերմափոխանցման դիմադրություններն են, $m^2 \cdot ^\circ C / \text{Վտ}$:

Բազմաշերտ պատող կոնստրուկցիայի առանձին շերտի, ինչպես նաև համասեռ (միաշերտ) պատող կոնստրուկցիայի ջերմափոխանցման դիմադրությունը՝ R , $m^2 \cdot ^\circ C / \text{Վտ}$, հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$R = \delta / \lambda, \quad (3)$$

որտեղ δ շերտի հաստությունն է, մ,

իսկ λ ՝ նյութի շերտի ջերմահաղորդականության հաշվարկային գործակիցը, $\text{Վտ} / m \cdot ^\circ C$, որն ընդունվում է ըստ ՀՀՇՆ II-7.02-95-ի 3-րդ հավելվածի:

Պատող կոնստրուկցիայի ջերմափոխանցման դիմադրությունը R_0 , $m^2 \cdot ^\circ C / \text{Վտ}$, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$R_0 = 1/a_{ti} + R_{li} + 1/a_{tw}, \quad (4)$$

որտեղ a_{ti} ՝ կոնստրուկցիայի ներքին մակերևույթի ջերմատվության գործակիցն է, $\text{Վտ} / m^2 \cdot ^\circ C$ և որոշվում է ըստ ՀՀՇՆ II-7.02-95 2-րդ աղյուսակի,

R_0 ՝ պատող կոնստրուկցիայի ջերմափոխանցման դիմադրությունն է, $m^2 \cdot ^\circ C / \text{Վտ}$,

a_{tw} ՝ պատող կոնստրուկցիայի արտաքին մակերևույթի ջերմատվության գործակիցն է $\text{Վտ} / m^2 \cdot ^\circ C$ և որոշվում է համաձայն ՀՀՇՆ II-7.02-95 3-րդ աղյուսակի:

3.7. Նկուղի հատակի մակարդակից բարձր գտնվող պատի ջերմամեկուսացման հաստությունն ընդունվում է արտաքին պատերի ջերմամեկուսիչ շերտի հաստությանը հավասար և հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$\delta_2 = (R_{պ} - 0.16 - \frac{\delta}{\lambda}) \times \lambda_2, \quad (5)$$

որտեղ $R_{պ}$ արտաքին պատի ջերմափոխանցման պահանջվող դիմադրությունն է, հաշվարկված ըստ D_c ջեռուցման ժամանակաշրջանի աստիճան-օրերի (ՀՀՇՆ II-7.02-95, 6-րդ աղյուսակ), $m^2 \cdot ^\circ C / \text{Վտ}$,

δ ՝ պատի հաստությունը, մ,

λ ՝ պատի նյութի ջերմահաղորդականության գործակիցը, $\text{Վտ} / m \cdot ^\circ C$,

λ_2 ՝ ջերմամեկուսիչի ջերմահաղորդականության գործակիցը, $\text{Վտ} / m \cdot ^\circ C$:

3.8. Նկուղի հատակի մակարդակից ցածր գտնվող պատի ջերմամեկուսիչ շերտի հաստությունը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\delta_2 = (R_{պ} - 1.05 - \frac{\delta}{\lambda}) \times \lambda_2, \quad (6)$$

3.9. Պատերի և ծածկերի վերակառուցման համար լրացուցիչ ջերմամեկուսացման շերտի հաստությունը որոշվում է, ելնելով ջերմափոխանցման դիմադրությունների

տարբերությունից՝ $R_{\text{ը}} = R_{0\text{պ}} - R_{0\text{գ}}$, որտեղ $R_{0\text{գ}}$ հաշվարկվում է ըստ ՇՆՁ II-7.102-98:

3.10. ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի 2.1 աղյուսակում նշված բնակավայրերի համար պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսիչ շերտի նվազագույն հաստությունները բերված են 6-րդ հավելվածի 1-ից 64 աղյուսակներում:

Ծանոթություն: Կոնստրուկտիվ նկատառումներից էլնելով, 1-ից 64 աղյուսակների ջերմամեկուսիչ շերտերի հաստությունները 15 սմ-ից ավելի ստանալու դեպքում, խորհուրդ է փոխվում օգտագործել այլ նյութ:

3.11. Գրունտի վրա տեղադրված հատակների ջերմամեկուսիչ շերտի նվազագույն պահանջվող հաստությունն ընդունվում է ըստ ՀՀՇՆ II-7.02-95, ՇՆՁ II-7.102-98, ՀՀՇՆ II-7.01-2011 շինարարական նորմերի պահանջների, ընդ որում ըստ ջերմայուրացման ցուցանիշների, հատակը պետք է համապատասխանի նորմավորված արժեքներին:

3.12. Ջերմամեկուսիչ նյութի ընտրության ժամանակ ըստ կառույցի բնույթի հարկավոր է հաշվի առնել նյութի հուսալիության, շրջակա միջավայրի պահպանության, հակահրդեհային, սանիտարահիգիենիկ և այլ անհրաժեշտ պահանջներ: Շենքերի նախագծման ժամանակ, կախված կառույցի պատող կոնստրուկցիաների տեսակից, ընտրված ջերմամեկուսիչ նյութի առանձնահատկություններից, երեսապատող նյութի ընտրությունից, հարկավոր է իրականացնել մանրամասն կոնստրուկտորական հաշվարկներ դրանց ամրությունը և կապակցումը ապահովելու համար:

4. Արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը

4.1. Առանց օդային միջնաշերտի արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը

4.1.1. Պատը կարող է լինել կրող կամ ինքնակրող, և իրենից ներկայացնում է եռաշերտ կոնստրուկցիա, որի հիմնական շերտը դիտարկված է 1-ին աղյուսակում ներկայացված կոնստրուկտիվ տարբերակներով. միջնամասում գտնվում է ջերմամեկուսիչ շերտը, իսկ երեսպատման շերտը դիտարկված է 1.3 կետում թվարկված տարբերակներով (8-րդ հավելված, 2-7 թերթեր, 6-րդ հավելված, 1-33 աղյուսակներ):

Ջերմային պաշտպանությունը հանքային բամբակով

4.1.2. Արտաքին պատերը հանքային բամբակից ներքնակներով կամ սալերով ջերմամեկուսացնելու դեպքում առավել նպատակահարմար է օգտագործել կոշտ ներքնակներ կամ սալեր: Ջերմամեկուսացման աշխատանքները սկսելուց առաջ անհրաժեշտ է համոզվել, որ պատի մակերևույթը չոր է և մաքուր:

4.1.3. Ներքնակների ամրացման համար օգտագործվում են հատուկ սոսինձներ (2-րդ հավելված) և մետաղյա առանցք ունեցող պլաստմասե խցաբութակներ: Դիտարկված խցաբութակները բերվում են հավելված 3-ում:


4.1.4. Հանքային բամբակից ներքնակները անհրաժեշտ է կիպ հպել պատին՝ օդային բացակների առկայությունն անթույլատրելի է (նկ. 1): Անհրաժեշտ է պատի



մակերևույթին հանքային բամբակի հոծ (ամբողջական) սոսնձում, որն իր հերթին ենթադրում է պատի մակերևույթի նախապատրաստում, հղկում և փոշեզրկում:


4.1.5. Ջերմամեկուսիչ համակարգում առկա ջերմային կարաններում անհրաժեշտ է նախատեսել խտացնող ներդիրների տեղադրում, որոնց ամրացումն իրականացվում է ներքնակների ամրացման աշխատանքներին զուգահեռ:

4.1.6. Ներքնակների և լուսաթափանց կոնստրուկցիաների բլոկների հպման տեղերում շեպերի տեղադրմանը զուգահեռ հարկավոր է նախատեսել դրանց հերմետիկացում, օրինակ՝ սիլիկոնային հիմքով հերմետիկ նյութերով:



Նկ. 1. Առանց օդային միջնաշերտով պատերի դեպքում էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերով կամ հանքային բամբակից ներքնակներով կամ սալերով մեկուսացումը


4.1.7. Խարսխային պրոֆիլների տեղադրման ժամանակ անհրաժեշտ է պատին դրանց հպման տեղերում թողնել 2-3 մմ բացվածք (8-րդ հավելված, 8-րդ թերթ, նկ. 2):



Նկ. 2. Խարսխային պրոֆիլ

4.1.8. Խարսխային պրոֆիլի վրա հանքային բամբակից ներքնակի կամ սալի առաջին շարքի տեղադրումից հետո պատի կրող մասի մակերևույթի ու պրոֆիլի միջև բացվածքն անհրաժեշտ է լցնել պոլիմերային նյութով, օրինակ՝ փրփրապոլիուրեթանով:

4.1.9. Պատերի արտաքին և ներքին անկյուններում ջերմամեկուսիչ ներքնակների տեղադրումն ու սոսնձումն անհրաժեշտ է իրականացնել կարերի ամրացմամբ և ատամնավոր սեղմմամբ (зубчатое защемление, նկ. 3):



Նկ. 3. Հանքային բամբակից կամ էքստրուդացված փրփրապոլիստիրոլից ջերմամեկուսիչ սալերի անկյունային միացումների ատամնային սեղմվածքը

4.1.10. Պատուհանների ու դռների բացվածքներում հանքային բամբակից ներքնակները պետք է լինեն ամբողջական՝ համապատասխան չափսերի կտորների կտրումով: Չի թույլատրվում ներքնակները կցել պատուհանների ու դռան բացվածքների անկյունների գծով:

4.1.11. Ջերմամեկուսիչ ներքնակները սոսնձվում և ամրացվում են խցաբուխակներով: Արտաքին օդի 20°C ջերմաստիճանի և 65% հարաբերական խոնավության պայմաններում սոսնձի լիարժեք

չորացման ժամկետը 72 ժամ է¹:

4.1.12. Ջերմամեկուսիչ ներքնակները տեղադրվում են իրար կիպ հաված: Այն դեպքում, երբ դրանց միջև առաջանում է 2 մմ և ավելի բացվածք, այն անհրաժեշտ է լցնել նույն ջերմամեկուսիչ նյութով:

Ջերմային պաշտպանությունը էքստրուդացված փրփրապոլիստիրոլով


4.1.13. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից ջերմամեկուսիչ սալերի տեղադրումը անհրաժեշտ է սկսել ներքևից, սալերը տեղադրելով հորիզոնական ուղղությամբ՝ մեկ շարքով: Աշխատանքները պետք է կատարվեն +5°C-ից բարձր ջերմաստիճանի և չոր եղանակային պայմաններում:

4.1.14. Սալերի հաջորդ շարքը տեղադրվում է նախորդին կիպ հպելով: Սալը պատին սոսնձելուց մի քանի (մինչև 5) րոպե անց արգելվում է փոփոխել սալի մոնտաժային դիրքը:

4.1.15. Պատերի արտաքին շերտի ցածր որակի դեպքում (փխրուն, շերտատվող մակերևույթ) էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերը լրացուցիչ ամրացվում են պլաստմասե խցաբութակներով: Ցանկալի է խուսափել մետաղական խցաբութակների կիրառումից, քանի որ դրանք լրացուցիչ ցրտի կամրջակներ են: Պատի մեջ խցաբութակի խարսխման խորությունը պետք է լինի 6-9սմ, իսկ 1մ² վրա բաշխվածությունը, շախմատային տեղադրմամբ, 4-6 (անկյունային մասերում՝ 8) հատից ոչ պակաս: Նախքան խցաբութակների տեղադրելը հարկավոր է ստուգել սալերի հպման եզրերը և հղկել առկա անհարթությունները:

4.1.16. Եթե նախատեսվում է էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերի սվաղում, ապա սալը սոսնձով ամրացնելուց հետո անհրաժեշտ է ապակեցանցով ամրանավորել սալի մակերևույթը 72 ժամից ոչ պակաս (ընդ որում, փրփրապոլիստիրոլն անհրաժեշտ է պաշտպանել ուլտրամա-նուշակագույն ճառագայթներից): Ապակեցանցի բնութագրերը ներկայացված են 1-ին հավելվածում: Շենքի անկյունից սկսած անհրաժեշտ է քսել 3 մմ հաստությամբ սոսնձի շերտ (սոսինձների տեսակները տրված են 2-րդ հավելվածում): Ապակեցանցը տեղադրում են սոսնձի թարմ շերտի վրա, ընդ որում, անկյունային մասում անհրաժեշտ է թողնել ապակեցանցի 15 սմ-ից ոչ պակաս ավելցուկ, որը պետք է ծովի և ամրացվի անկյան մյուս կողմում:

4.1.17. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից ջերմամեկուսիչ սալերի և պատուհանների հպման անկյունային մասերը պետք է ուժեղացվեն ոչ մետաղական ցանցով



Նկ. 4. Պատուհանների և դռների բացվածքների անկյունների լրացուցիչ ուժեղացման ոչ մետաղական ցանց

¹ Ներկայացված տվյալները բերված են մեր շուկայում առկա նյութի օրինակի համար և վերաբերում են մասնավոր դեպքին: Կախված պատի տեսակից, մակերևույթից, կլիմայական պայմաններից, սոսնձի տեսակից և այլ հանգամանքներից՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար սոսնձի չորացման ժամանակը պետք է համապատասխանի կիրառվող սոսնձի տեխնիկական պայմաններին:




(նկ. 4): Ցանցի տեղադրումից առաջ անկյունները պետք է մետաղական անկյունակների միջոցով պաշտպանված լինեն վնասումներից:

4.1.18. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերի և փրփրապոլիուրեթանով մեկուսացման դեպքում պատի և տանիքի կոնստրուկցիաների միջև պետք է նախատեսել հանքային բամբակից կամ հրակայուն փրփրապոլիուրեթանից հակահրդեհային հատվածամասեր, որոնց լայնությունը պետք է լինի 400մմ ոչ պակաս:

Ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

4.1.19. Ջերմամեկուսացումը փրփրապոլիուրեթանով իրականացնելուց առաջ հարկավոր է մակերևույթը մաքրել փոշուց: Նկ. 5-ում ցույց է տրված փրփրապոլիուրեթանով մակերևույթի ջերմամեկուսացման շերտերի դասավորության օրինակ:

4.1.20. Տեղում կոնստրուկցիայի վրա փչման եղանակով իրականացվող փրփրապոլիուրեթանով ջերմամեկուսացումը ստացվում է երկու հեղուկ բաղադրիչների խառնման արդյունքում: Անհրաժեշտ է օգտագործել այնպիսի գործիքներ, որոնք թույլ կտան փչման ընթացքում ստանալ Ա(A) և Բ(B) բաղադրիչների խառնում 1:1 ÷ 1:1,7 հարաբերությամբ:




Նկ. 5. Առանց կարերի փրփրապոլիուրեթանի շերտով պատի ջերմային պաշտպանում

4.1.21. Ջերմամեկուսիչ շերտի փչումը հնարավոր է իրականացնել ինչպես շինհրապարակում, այնպես էլ գործարանում՝ պատրաստի եռաշերտ պատի պանելների արտադրության ժամանակ:

4.1.22. Փչման ընթացքում անհրաժեշտ է փրփրապոլիուրեթանի շերտի հաստությունն իրականացնել հավասարաչափ, շերտ առ շերտ, մինչև որ ջերմամեկուսիչ շերտի ընդհանուր հաստությունը հավասարվի հաշվարկով պահանջվողին:

4.1.23. Լուսաթափանց կոնստրուկցիաները, ինչպես նաև մակերևույթները, որոնց վրա չի նախատեսվում փրփրապոլիուրեթանի շերտի փչում, անհրաժեշտ է ծածկել պաշտպանիչ թաղանթով:



Նկ. 6. Փրփրապոլիուրեթանե պատրաստի սալեր

4.1.24. Փրփրապոլիուրեթանե պատրաստի սալերով (նկ. 6) ջերմամեկուսիչ շերտի իրականացման դեպքում անհրաժեշտ է օգտագործել երկբաղադրիչ պոլիուրեթանային հիմքով սոսինձներ (սոսինձների տեխնիկական բնութագրերը և կիրառման առանձնահատկությունները ճշտել արտադրողից/ներկրողից):

4.1.25. Ջերմամեկուսիչ շերտն անհրաժեշտ է պաշտպանել Արեգակի ճառագայթների ազդեցությունից, այն պատելով ց/ա շաղախով կամ ճակատային այլ սվաղներով: Պաշտպանիչ երեսպատման շերտի իրականացումն անհրաժեշտ է նախատեսել փրփրապոլիուրեթանի փչումից կամ սալերի տեղադրումից ոչ պակաս, քան 24 ժամ հետո:

Ջերմային պաշտպանությունը բիրումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեռլիտից պատրաստվածքներով

4.1.26. Բիտումային կամ սիլիկատային կապակցանյութի շնորհիվ սալերը ապահովում են ամուր ջերմամեկուսիչ շերտ: Սալերի ամրացումն անհրաժեշտ է իրականացնել պլաստմասե խցաբութակներով և սոսնձով (նկ. 7):


4.1.27. Փքապեռլիտով լցոնված պարկերը տեղադրվում են ներքևից՝ հորիզոնական շարքերով, իրար կիպ հավաճ՝ հաջորդ շարքը տեղադրելով նախորդի վրա: Շարքերի հպման տեղամասերում բացակներ չեն թույլատրվում:



Նկ. 7. Բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեռլիտից արտադրանք

4.1.28. Պարկերը պատին կիպ պահելու համար օգտագործում են ուղղորդներ (փայտյա, պլաստմասե, այլումինե և այլն), որոնք պարկերը ֆիքսում են ուղիղ դիրքում և որոնց վրա հետագայում հնարավոր է ամրացնել, օրինակ, պլաստմասե սայդինգ (նկ. 8):

4.1.29. Առանց պարկերի լցոնումը (նկ. 9) անհրաժեշտ է կատարել այն դեպքում, երբ ջերմամեկուսացման շերտը երկու կողմից պաշտպանված է խիտ, ոչ ծակոտ կեն նյութով, օրինակ, երբ այն գտնվում է երկու շարվածքների միջև: Այդ դեպքում լցոնումը անհրաժեշտ է նախատեսել շարվածքի իրականացմանը զուգահեռ և պարբերաբար այն տոփանել (չորս շարք շարվածք ունենալու դեպքում իրականացնում են լցոնում, այնուհետև շարունակում կառուցել շարվածքի հաջորդ չորս շարքը):



Նկ. 8. Պլաստմասե սայդինգով երեսպատում




Նկ. 9. Շարվածքի լցոնումը պեռլիտով

4.2. Օդային միջնաշերտով արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը

- 4.2.1. Օդափոխվող օդային միջնաշերտով պատերի ջերմային պաշտպանության կոնստրուկտիվ լուծումներին վերաբերող տվյալները ներկայացված են 2-րդ աղյուսակում, 8-րդ հավելվածում (12-15 թերթեր), 6-րդ հավելվածում (37-43 աղյուսակներ):
- 4.2.2. Որպես օդափոխվող օդային միջնաշերտով պատերի երեսպատման շերտ դիտարկված են քարանյութերից բլոկներ, մետաղական թերթավոր պրոֆիլներ (ալիկաբոնդ), ինչպես նաև պլաստմասե սայրինգ:
- 4.2.3. Ջերմամեկուսիչ շերտն անհրաժեշտ է պաշտպանել հողմապաշտպան թաղանթով:
- 4.2.4. Կարկասը բաղկացած է պահունակներից, ուղղորդներից և երեսպատման սալերի ամրացման համար նախատեսված կցակներից:
- 4.2.5. Կարկասի պահունակներն ու ուղղորդները, ինչպես նաև երեսպատման սալերի ամրացման կցակները պատրաստվում են ցինկապատ պողպատից: Կցակների հաստությունը պետք է լինի 1 մմ-ից ոչ պակաս, լայնությունը՝ 10 մմ-ից ոչ պակաս:

- 4.2.6. Պահունակն ունի շարժական ներդիր, որը թույլ է տալիս տվյալ հարթության մեջ տեղակայել ուղղորդները: Շարժական ներդիրը թույլ է տալիս ջերմամեկուսիչ շերտի հաստությանը համապատասխան փոփոխել պահունակի երկարությունը (նկ. 10):




Նկ. 10. Շարժական ներդիրներով պահունակներ

- 4.2.7. Պահունակների հորիզոնական քայլը ցանկալի է ընդունել 600 մմ, ուղղաձիգ ուղղությամբ՝ 1400 մմ ոչ պակաս:
- 4.2.8. Պահունակներն ամրացվում են պատի կրող մասին ցրտի կամրջակ չառաջացնող խցաբութակներով, որոնց քանակը որոշվում է համապատասխան հաշվարկով:

- 4.2.9. Ուղղորդների ստանդարտ երկարությունը 3000 մմ է (նկ. 11): Ուղղորդներն իրականացվում են T-աձև ու Դ-աձև պրոֆիլների տեսքով և պահունակներին երկու կողմից ամրացվում են 3.2-4.8մմ տրամագծով ինքնակտրող պտուտակներով:

- 4.2.10. Ուղղաձիգ ուղղորդիչ պրոֆիլների կցվանքն իրականացվում է ներդիրների միջոցով, ընդ որում՝ ուղղորդների միջև անհրաժեշտ է նախատեսել 8-10 մմ բացակ:




Նկ. 11. Կախովի ճակատային համակարգերի ուղղորդները:

Ջերմային պաշտպանությունը հանքային բամբակով, էքստրուդացված փրփրապոլիստիրոլով

4.2.11. Հանքային բամբակից ներքնակները կամ սալերը, ինչպես նաև էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերը պատի կրող մասին ամրանում են ափսեանման հատուկ խցաբութակներով (նկ. 12):

4.2.12. Հանքային բամբակից ներքնակների կամ սալերի կամ էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերի խոնավացումից խուսափելու համար արտաքինից ամրացվում է դիֆուզիոն թաղանթ:

4.2.13. Կերամագրանիտե կամ քարանյութերից երեսպատման սալիկների ամրացման ժամանակ, այն կցակները, որոնց տեղադրման քայլը համընկնում է երեսպատման սալիկների չափերի հետ, ուղղորդների վրա տեղադրում են ամրակների օգնությամբ:



4.2.14. Հանքային բամբակից ներքնակների կամ սալերի և էքստրուդացված


Նկ. 12. Հանքային բամբակից ներքնակներով կամ սալերով կամ լայնացված փրփրապոլիստիրոլից սալերով օդային միջնաշերտով պատի ջերմային պաշտպանությունը

փրփրապոլիստիրոլից սալերի ամրացումն անհրաժեշտ է իրականացնել սոսինձների և ցրտի կամրջակներ չառաջացնող խցաբութակների օգնությամբ: Միաշերտ ջերմամեկուսացման դեպքում խցաբութակների քանակը 5-8 հատ/մ² է, իսկ երկշերտ ջերմամեկուսացման դեպքում՝ 14 հատ/մ²: Ներքնակները և սալերը անհրաժեշտ է կիպ հպել միմյանց: Կարանի լայնությունը 2 մմ-ից չպետք է գերազանցի: Ներքնակները և սալերը տեղադրվում են շախմատաձև՝ շարքերի հորիզոնական շեղումներով:

4.2.15. Հանքային բամբակից ներքնակների կամ սալերի և էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերի վնասումից խուսափելու համար պահունակների տեղակայման մասերում անհրաժեշտ է նախապես իրականացնել անցքեր:

Ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

4.2.16. Փրփրապոլիուրեթանի փչումն իրականացվում է ուղղորդների պահունակների տեղադրումից հետո (նկ. 13):



Նկ. 13. Փրփրապոլիուրեթանի շերտով և օդային միջնաշերտով պատի ջերմային պաշտպանությունը


Ջերմային պաշտպանությունը բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեղիտե արտադրանքով

4.2.17. Օդափոխվող օդային միջնաշերտով պատերի ջերմամեկուսացումը բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեղիտով նախատեսելիս անհրաժեշտ է օգտագործել սալեր:

4.3. Նկուղի արտաքին պատերի ջերմային պաշտպանությունը

4.3.1. Դիտարկված նկուղի պատերի ջերմային պաշտպանության կոնստրուկտիվ լուծումները բերված են 6-րդ հավելվածում (55-60 աղյուսակներ):

4.3.2. Նկուղների արտաքին պատերի ջերմամեկուսացումն անհրաժեշտ է նախատեսել միայն «տաք» նկուղների համար (նկ. 14):



Նկ. 14. Նկուղի պատերի ջերմային պաշտպանությունը

Ջերմային պաշտպանությունը հանքային բամբակով

4.3.3. Հանքային բամբակի մանրաթելերը հեղուկ չեն ներծծում, սակայն հեղուկը հեշտությամբ լցվում է հանքային բամբակում առկա դատարկությունները, ինչը զգալիորեն իջեցնում է վերջինիս ջերմատեխնիկական բնութագրերը: Այդ իսկ պատճառով նկուղի պատերը հանքային բամբակից ներքնակներով ջերմամեկուսացնելու դեպքում անհրաժեշտ է դրանք պաշտպանել գրունտային ջրերից, իսկ ջերմամեկուսիչ շերտը գրունտի ճնշումից պաշտպանելու համար՝ օգտագործել նաև խիտ ներքնակներ կամ սալեր:

4.3.4. Բիտումային սոսնձով հանքային բամբակից ներքնակի կամ սալի սոսնձումն իրականացվում է պատի վրա ուղղահայաց ջրամեկուսիչ շերտի տեղադրումից հետո, այնուհետև ներքնակը պաշտպանվում է լրացուցիչ ջրամեկուսիչ շերտով:

4.3.5. Հանքային բամբակից ներքնակը հնարավոր է պաշտպանել նաև լրացուցիչ պաշտպանիչ շարվածքի օգնությամբ, որն իր հերթին, նույնպես պետք է պատվի ջրամեկուսիչ նյութով:

Ջերմային պաշտպանությունը էքստրուդացված փրփրապոլիստիրոլով

4.3.6. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլով նկուղի պատերի ջերմամեկուսացումն առավել նպատակահարմար է, քանի որ նյութն ունի գրեթե զրոյական ջրակլանում (նկ. 15):

4.3.7. Ուղղահայաց ջրամեկուսացման շերտից առաջ անհրաժեշտ է պատերը հարթեցնել ց/ա շաղախի սվաղի օգնությամբ: Առավել նպատակահարմար է ջրամեկուսացումն իրականացնել քսման կամ սոսնձման եղանակով, քանի որ


հաջորդ ջերմամեկուսիչ շերտի ամրության հուսալիությունը կախված է ջրամեկուսիչ շերտի ամրությունից:

4.3.8. Ջրամեկուսիչ շերտին էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերի ամրացումն անհրաժեշտ է կատարել բիտումային սոսնձի օգնությամբ:

Հարկ է խուսափել սոսնձի բաղադրությունում ացետոնի առկայությունից, քանի որ այն քայքայում է փրփրապոլիստիրոլը:

4.3.9. էքստրուդացված փրփրապոլիստիրոլից ստանդարտ տարածված չափերի սալի վրա սոսնձումն իրականացվում է 8-10 կետերում, ինչից հետո այն կիպ սեղմվում է պատին: Ամեն հաջորդ շերտը պետք է իրականացնել պարտադիր շեղումով (շարվածքի շախմատաձև սխեմայով):

4.3.10. էքստրուդացված փրփրապոլիստիրոլը չի պահանջում պաշտպանություն գրունտային ջրերից:



Նկ. 15. Նկուղի պատերի ջերմային պաշտպանությունը էքստրուդացված փրփրապոլիստիրոլով


Ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

4.3.11. Փրփրապոլիուրեթանով ջերմամեկուսացման համար անհրաժեշտ է կիրառել բարձր խտությամբ (60 կգ/մ³ և ավելի խտությամբ) կոշտ փրփրապոլիուրեթան, որը կարելի է կիրառել ինչպես փչման, այնպես էլ պատրաստի սալերի տեղադրման եղանակով: Փչման եղանակն առավել նախընտրելի է, քանի որ ապահովում է առանց կարանների ջերմամեկուսացում և ցրտի կամրջակների բացակայություն (նկ. 16):

Ջերմային պաշտպանությունը բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեղիկտե արտադրանքով

4.3.12. Բիտումային կամ սիլիկատային կապակցանյութերով փքապեղիկտե սալերն անհրաժեշտ է խցաբութակներով ամրացնել ջրամեկուսիչ շերտով պատված պատերին:

4.3.13. Առավել նպատակահարմար է օգտագործել պեղիկտե լցանյութերով պարկերը, քանի որ դրանք զերծ են ցրտի կամրջակներից, իսկ գրունտի հետլիցքը թույլ չի տալիս պարկերի տեղաշարժում:



Նկ. 16. Նկուղի պատերի ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

5. Ծածկերի ջերմային պաշտպանությունը


5.1. Նկուղի ծածկի ջերմային պաշտպանությունը

5.1.1. Դիտարկված նկուղի ծածկերի ջերմային պաշտպանության կոնստրուկտիվ լուծումները ներկայացված են 6-րդ հավելվածում (46-54 աղյուսակներ):

5.1.2. Ընդհանուր դեպքում ծածկը բաղկացած է.

- կրող կոնստրուկցիայից (միաձույլ ե/բ կամ հավաքովի ե/բ սալեր),
- գոլորշամեկուսիչ շերտ՝ բիտումային և բիտումային-պոլիմերային հալեցվող գլանափաթեթային նյութերից,
- ջերմամեկուսիչ շերտից,
- ց/ա շաղախի հարթաշերտից՝ առնվազն 5 ՄՊա ամրությամբ,
- գլանափաթեթային նյութերի ծածկից/շերտից:

Տանիքային ծածկն իրականացնում են միաշերտ կամ երկշերտ, ընդ որում՝ վերին շերտի համար օգտագործում են խոշորահատիկ լցանյութերով նյութեր (նկ. 17):



Նկ. 17. Նկուղի ծածկի ջերմային պաշտպանությունը

Ջերմային պաշտպանությունը հանքային բամբակով

5.1.3. Նկուղի ծածկը հանքային բամբակից ներքնակներով ջերմամեկուսացման դեպքում խորհուրդ է տրվում օգտագործել հորիզոնական ուղղորդներ (օրինակ փայտե): Ներքնակներով ջերմամեկուսացումն անհրաժեշտ է իրականացնել նկուղի ծածկի տակից, նյութը պաշտպանելով վնասակար միջատներից:

5.1.4. Գոլորշամեկուսիչ շերտը պետք է տեղադրվի տաք սենքի կողմից և նախորդի վերջին շերտին:

Ջերմային պաշտպանությունը էքստրուդացված փրփրապոլիստիրոլով

5.1.5. Հատակը կարելի է ծածկել բարձր խտությամբ (60 կգ/մ³ և ավելի) էքստրուդացված փրփրապոլիստիրոլից ամուր սալերով, այնուհետև իրականացնել ց/ա շաղախի հարթեցնող շերտը և հատակի ծածկոյթը:

5.1.6. Գրունտի վրա տեղադրված հատակները հնարավոր է ջերմամեկուսացնել էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերով: Այդ դեպքում անհրաժեշտ է նախատեսել ջրամեկուսացում, իսկ սալերը տեղադրել խճային կամ ավազային լցվածքի կամ ց/ա շաղախի հարթաշերտի վրա:

5.1.7. Ծածկի մակերևույթը պետք է լինի մաքուր, չոր և հարթ: Խորդուբորդությունների առկայության դեպքում անհրաժեշտ է ծածկը հարթեցնել ց/ա շաղախի հարթաշերտի օգնությամբ:

5.1.8. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերի տեղադրումն անհրաժեշտ է նախատեսել այնպես, որ սալերը, հնարավորինս, կիպ հավաքված լինեն միմյանց:

- 5.1.9. Գրունտի վրա տեղադրված հատակների դեպքում անհրաժեշտ է նախատեսել ջրամեկուսիչ շերտ, օրինակ, 0,2 մմ հաստությամբ պոլիէթիլենային թաղանթից:
- 5.1.10. Ջրամեկուսիչ շերտի վրա այնուհետև հարկավոր է նախատեսել ոչ պակաս, քան 5 սմ հաստությամբ ց/ա շաղախի հարթաշերտ, և ապա՝ հատակի երեսային շերտ:

Ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

- 5.1.11. Բարձր խտությամբ փրփրապոլիուրեթանով ջերմամեկուսացման դեպքում գոլորշամեկուսիչ շերտ կարելի է չնախատեսել:

Ջերմային պաշտպանությունը բիրումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեռլիտ արտադրանքով

- 5.1.12. Բիրումային կամ սիլիկատային կապակցանյութերով փքապեռլիտ սալերը տեղադրվում են ծածկի վրա, իսկ պարկերը՝ փայտե ուղղորդների միջև: Հնարավոր է նաև առանց պարկերի խիտ պեռլիտի լցնում՝ հետագա տոփանմամբ:
- 5.1.13. Պեռլիտե լցանյութի վրա կարելի է իրականացնել ամրանավորված կամ չամրանավորված հարթաշերտ՝ առանց նախատեսելու փայտե ուղղորդներ:

5.2. Ձեղնահարկով շենքերի վերջին հարկի ծածկ (վերնածածկ)

- 5.2.1. Վերնածածկը ջերմամեկուսացնում են այն դեպքում, երբ չի նախատեսվում ձեղնահարկի տարածքի շահագործում և տանիքի լանջերի ջերմամեկուսացում: Ցանկալի է ձեղնահարկի պարագծով ջերմամեկուսիչի հաստությունը մեծացնել, նախատեսելով 1 մ լայնությամբ լրացուցիչ շերտ:
- 5.2.2. Ձեղնահարկի սպասարկման համար ջերմամեկուսիչ շերտի վերին մասում անհրաժեշտ է նախատեսել քայլելու անցուղի: Հնարավոր է նաև ջերմամեկուսիչը ծածկել ամրանավորված կամ առանց ամրանավորման հարթաշերտով:
- 5.2.3. Կախված ջերմամեկուսիչ նյութի տեսակից ջերմամեկուսացված ծածկի կոնստրուկտիվ լուծումները կարող են տարբերվել, սակայն սկզբունքը մնում է նույնը՝ սկզբից տեղադրվում է գոլորշամեկուսիչ շերտն, այնուհետև հաշվարկային հաստությամբ ջերմամեկուսիչը և հատակային ծածկը՝ եթե նախատեսվում է շահագործում (6-րդ հավելված, 34-36 աղյուսակներ):
- 5.2.4. Ջերմամեկուսիչի վրա հողմապաշտպան կամ դիֆուզիոն թաղանթ կարելի է չնախատեսել, քանի որ նյութի չորացումն իրականացվում է ձեղնահարկի օդի կոնվեկտիվ շրջանառության շնորհիվ:
- 5.2.5. Ջերմամեկուսիչը բոլոր կողմերից պաշտպանելու համար գոլորշամեկուսիչ նյութը, որը տեղադրվում է ջերմամեկուսիչի տակ, իրականացվում է տաշտի ձևով: Չոր (Ա) և նորմալ (Բ) շահագործման պայմաններում գտնվող ձեղնահարկերում բարձր գոլորշաթափանցման դիմադրություն ունեցող նյութերի տակ գոլորշամեկուսիչ շերտ չի իրականացվում: Խոնավ և թաց ռեժիմով ձեղնահարկերում գոլորշամեկուսիչը հարկավոր է նախատեսել բոլոր տեսակի ջերմամեկուսիչ նյութերի տակ:

Ջերմային պաշտպանությունը հանքային բամբակով

- 5.2.6. Հանքային բամբակից ներքնակներով կամ սալերով ջերմամեկուսացման դեպքում ձեղնահարկի հատակը անհրաժեշտ է նախապես հարթեցնել ց/ա շաղախի հարթաշերտով՝ խուսափելու համար սուր խորդուբորդություններից ներքնակի պատռումից:
- 5.2.7. Հարթեցված ծածկի վրա դրվում է գոլորշամեկուսիչ թաղանթ, այնուհետև հանքային բամբակից ներքնակը կամ սալը: Ինչպես գոլորշամեկուսիչ թաղանթը, ջերմամեկուսիչը նույնպես տեղադրվում է տաշտի ձևով, այսինքն՝ եզրերը թեքվում են պատերի վրա: Փափուկ և կիսակոշտ հանքային բամբակից ներքնակների դեպքում ջերմամեկուսիչ շերտի վրա առանց ցրտի կամրջակների առաջացման անհնարին է իրականացնել սպասարկման անցուղիներ, այդ իսկ պատճառով ցանկալի է կիրառել կոշտ ներքնակներ:

Ջերմային պաշտպանությունը էքստրուդացված փրփրապոլիստիրոլով

- 5.2.8. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից ջերմամեկուսացման դեպքում անհրաժեշտ է ձեղնահարկի ծածկը հարթեցնել ց/ա շաղախի հարթաշերտով, որպեսզի խուսափել 5 մմ և ավելի խորդուբորդություններից:
- 5.2.9. Հարթեցումից հետո սալերը ազատ ձևով տեղադրվում են հարթ մակերևույթի վրա: Եթե կիրառվում է ոչ թե էքստրուդացված փրփրապոլիստիրոլ, այլ փրփրապլաստ, ապա նախապես անհրաժեշտ է տեղադրել գոլորշամեկուսիչ և, հատկապես, հրապաշտպան շերտ:
- 5.2.10. Ձեղնահարկի սպասարկման համար փրփրապոլիստիրոլի շերտի վրա կարելի է իրականացնել 4 սմ հաստությամբ հարթաշերտ, կամ տեղադրել երկու թերթ գիպասատվարաթուղթ: Ցածր կրողունակությամբ ջերմամեկուսիչ շերտի կիրառման դեպքում (կրողունակությունը փոքր է 0,25 ՄՊա) հարթաշերտը պետք է ամրանավորված լինի մետաղական ցանցով:
- 5.2.11. Հարթաշերտի իրականացումից առաջ էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերի հպման տեղամասերը փակվում են կաշուն ժապավենով դեպի սալերի կցվանքի տեղամաս ցեմենտակաթի հոսքից խուսափելու համար:

Ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

- 5.2.12. Երկաթբետոնե ծածկերի ջերմամեկուսացումը փրփրապոլիուրեթանի փչմամբ հնարավոր է իրականացնել ցանկացած ուղղությամբ: Նույնիսկ 30 կգ/մ³ խտությամբ փրփրապոլիուրեթանն ապահովում է բավական կրողունակություն, որպեսզի հնարավոր լինի իրականացնել ձեղնահարկի սպասարկման անցուղիներ անմիջապես փրփրապոլիուրեթանի շերտի վրա՝ հարթաշերտի կամ գիպասատվարաթղթի թերթերի տեսքով:
- 5.2.13. Փչումից առաջ անհրաժեշտ է հեռացնել բոլոր այն նյութերը, որոնք բացասական ազդեցություն են թողնում փրփրապոլիուրեթանի վրա կամ վատացնում են դրա ադգեզիոն հատկությունները: Հիմքը, որի վրա պետք է փչվի փրփրապոլիուրեթանը, պետք է ունենա առնվազն +10°C ջերմաստիճան:
- 5.2.14. Մեկանգամյա աշխատանքային գործընթացում հնարավոր է իրականացնել 10-15 մմ հաստությամբ փրփրապոլիուրեթանի շերտ: Ցածր խտություն կարելի է ստանալ բարձր ջերմաստիճանների դեպքում և, ընդհակառակը, բարձր

խտություն ստացվում է ցածր ջերմաստիճանի և/կամ փրփուրի բարակ շերտերի դեպքում: Առավել հաստ շերտեր կարելի է ստանալ բազմակի փչման միջոցով:

- 5.2.15. Անհրաժեշտ է նախատեսել փրփրապոլիուրեթանի պաշտպանիչ շերտ Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ կայուն ներկից կամ մածիկից:
- 5.2.16. Որպես փրփրապոլիուրեթանի պաշտպանիչ շերտ կարելի է օգտագործել, օրինակ, ճակատային ակրիլային ներկ: Ճակատային ակրիլային ներկերը փրփրապոլիուրեթանի մակերևույթին առաջացնում են ճկուն շերտ, որը կարող է դեֆորմացվել փրփրապոլիուրեթանի հետ զուգահեռ: Ներկի ճկունությունը կախված է նրանում առկա լատեքսի քանակությունից: Տեխնիկական պայմանների համաձայն այդպիսի ներկապատում անհրաժեշտ է նախատեսել ոչ շուտ, քան փրփրապոլիուրեթանի շերտի իրականացումից 8 ժամ անց և ոչ ուշ, քան 7 օր անց:
- 5.2.17. Խորհուրդ է տրվում պարբերաբար վերահսկել փրփրապոլիուրեթանի շերտը: Մեխանիկական վնասվածքներ հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է դրանք անհապաղ վերականգնել, ինչպես նաև պետք է ստուգել ուլտրամանուշակագույն ճառագայթումից պաշտպանող շերտի վիճակը:

Ջերմային պաշտպանությունը բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեռլիտե արտադրանքով

- 5.2.18. Բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեռլիտե սալերով կամ լցանյութով ջերմամեկուսացումն իրականացվում է նույն կերպ, ինչպես և էքստրուդացված փրփրապոլիստիրոլի սալերով ջերմամեկուսիչ շերտը: Որպես չշահագործվող ձեղնահարկի ջերմամեկուսացման միջոց լայն կիրառություն ունի նաև խարամը:

5.3. Պատշգամբներ և բարձակային ելուստներ

- 5.3.1. Պատշգամբները և բարձակային ե/բ ելուստները ցրտի կամրջակներ և ջերմահաղորդիչ ներառումներ են: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է բարձակն ամբողջովին ջերմամեկուսացնել բոլոր կողմերից (8-րդ հավելված, 6-րդ թերթ):
- 5.3.2. Փափուկ և կիսակոշտ հանքային բամբակե ներքնակները անհրաժեշտ է կիրառել միայն բարձակի ստորին և կողային հատվածներում՝ ամրացնելով սոսնձամբ և խցաբութակներով, իսկ վերին մասում (պատշգամբի հատակ) հարկավոր է կիրառել խիտ նյութեր, կամ նախատեսել փայտե ուղղորդներով հատակ:
- 5.3.3. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերը անհրաժեշտ է բարձակին ամրացնել սոսնձամբ և խցաբութակներով՝ նախապես հարթեցնելով մակերևույթի խորդուբորդությունները:
- 5.3.4. Փրփրապոլիուրեթանը հնարավոր է փչել բարձակի ամբողջ մակերևույթով, ապահովելով առանց ցրտի կամրջակների ջերմային պաշտպանություն:
- 5.3.5. Բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեռլիտե սալերը պետք է ամրացնել խցաբութակների օգնությամբ:



6. Տանիքների ջերմային պաշտպանությունը

6.1. Հարթ տանիքների ջերմային պաշտպանությունը

6.1.1. Ջերմամեկուսացման աշխատանքները սկսելուց առաջ բոլոր մեկուսացվող հատվածների շինմոնտաժային աշխատանքները պետք է լինեն ավարտված (8-րդ հավելված, 11, 14 թերթեր, 6-րդ հավելված, 61-63 աղյուսակներ):

Ջերմային պաշտպանությունը հանքային բամբակով

6.1.2. Հանքային բամբակից ներքնակներով կամ սալերով ջերմամեկուսացման դեպքում կա երկու տարբերակ՝ միաշերտ և երկշերտ ջերմամեկուսացում:

6.1.3. Ջերմամեկուսիչ շերտի իրականացումից առաջ անհրաժեշտ է մաքրել և փոշեզերծել երկաթբետոնե ծածկը: Այնուհետև պատել երկշերտ նախաշերտով՝ 1մմ ընդհանուր հաստությամբ:

6.1.4. Ոչ պակաս 24 ժամ հետո իրականացնում են հանքային բամբակից ներքնակի կամ սալի վրա սառը բիտումային սոսնձանյութով՝ ժապավեններով կամ կետային (5 կետից ոչ պակաս) քսում, որից հետո ներքնակները պինդ սեղմում են ծածկին: Անհրաժեշտ է ապահովել ներքնակների կամ սալերի կիպ հպումը միմյանց՝ անթույլատրելի է 2 մմ-ից ավելի բացակների առկայությունը: Այդպիսի բացակների առկայության դեպքում անհրաժեշտ է դրանք լցնել նույն ջերմամեկուսիչ նյութով:


6.1.5. Եզրային և անկյունային հատվածներում ջերմամեկուսիչ շերտի ամրության ապահովման համար անհրաժեշտ է նախատեսել նաև մեխանիկական ամրացում՝ խցաբութակների օգնությամբ:

6.1.6. Սալերի կամ ներքնակների ամրացումից հետո անհրաժեշտ է նախատեսել ց/ա շաղախ հարթաշերտ, որի վրա սառը բիտումային սոսնձի օգնությամբ իրականացնում են ռուբերոիդ ջրամեկուսիչ շերտի սոսնձում (ռուբերոիդի երկրորդ շերտը սոսնձվում է առաջինին հալեցման եղանակով):

Ջերմային պաշտպանությունը էքստրուդացված փրփրապոլիստիրոլով

6.1.7. Էքստրուդացված փրփրապոլիստիրոլից սալերով հարթ տանիքի ջերմամեկուսիչ շերտն իրականացնում են նախապես դրված գոլորշամեկուսիչ շերտի վրա (նկ. 18): Ավելորդ ցրտի կամրջակների առաջացումից խուսափելու համար ամրացումը ցանկալի է իրականացնել սոսնձի օգնությամբ: Խցաբութակները ցանկալի է կիրառել միայն եզրային և անկյունային հատվածներում:

6.1.8. Իրականացված ջերմամեկուսիչ շերտն անհրաժեշտ է պատել հականեխիչ, անջրաթափանց և ուլտրամանուշակագույն ճառագայթներին դիմակայող շերտով:



Նկ. 18. Հարթ տանիքի ջերմային պաշտպանությունը

6.1.9. Հարթ տանիքները կարող են լինել շահագործվող և չշահագործվող: Շահագործվող տանիքների դեպքում անհրաժեշտ է ընտրել բարձր խտությամբ էքստրուդացված փրփրապոլիստիրոլ, որը հնարավոր է ծածկել

ցեմենտավազային հարթաշերտով կամ այլ նյութերով (օրինակ՝ բազալտե սալիկներով):

6.1.10. Որպես ջրամեկուսիչ նյութ առաջարկվում է կիրառել միաշերտ պոլիմերային թաղանթներ, կաուչուկային հիմքով թաղանթներ և ասֆալտային մածիկ:

Ջերմային պաշտպանությունը փրփրապոլիուրեթանով

6.1.11. Փրփրապոլիուրեթանի հարթ տանիքի վրա փչման հերթականությունը համարժեք է գրունտի վրա տեղադրված հատակի վրա փչման տեխնոլոգիային: Անհրաժեշտ է նախատեսել հաշվարկին համապատասխան հաստությամբ շերտով փրփրապոլիուրեթանի փչում: Շնորհիվ իր ճկունության, փրփրապոլիուրեթանի կիրառումը թույլ է տալիս անձրևաջրերի հեռացման համար ստանալ անհրաժեշտ թեքություններ:

6.1.12. Փրփրապոլիուրեթանն անհրաժեշտ է պատել արևապաշտպան նյութով: Բարձր ջրակայուն հատկությունների շնորհիվ լրացուցիչ ջրամեկուսացում կարելի է չնախատեսել: Որպես արևապաշտպան շերտի տարբերակ կարող է ծառայել ց/ա շաղախի հարթաշերտը կամ խճից ու կոպիճից լցվածքը:

Ջերմային պաշտպանությունը բիտումային կամ սիլիկատային կապակցանյութով փքապեղիպե արտադրանքով

6.1.13. Պեղիտե սալերը և լցանյութը անհրաժեշտ է պաշտպանել ջրամեկուսիչ նյութերով: Շահագործվող տանիքի դեպքում խորհուրդ չի տրվում լցանյութի օգտագործում:

